

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց համադրատան մէջ:

Օտարադպրոցների գինում են ուղղակի
Тифлису. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիւրժով:

Յայտարարութիւնների համար, գծադրում են
խրատական քաղաքի 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կալուածական խնդիր. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Գուրգիսի: Նամակ Զուրաբի:
Նամակ Խաչապուրի: Նամակ Խաչապուրի:
Լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա:
Խաչապուրի: Աւստրո-Ունգարիա: Ամերիկա: Արտաքին
Լուրեր. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նամակ Թիւրքիայից:

ԿԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Մշակի» № 153 մէջ տպագրւած Ա. Գա-
լանթարի մի բանասիրական յօդուած կալ-
ուածական խնդրի առիթով: Զօդուածագի-
րը շատ ուղիղ է ասում որ այժմ, երբ
վճռվում է կալուածական խնդիրը երեւա-
նեան նահանգում, մենք ոչինչ հաստատ եւ
գրական չենք չունենք մեր գիւղացիների
եւ կալուածատէրերի անտեսական յարաբե-
րութիւնների մասին, առհասարակ թէ մեր
Հին եւ թէ նոր կալուածական ձեւերի մա-
սին, այնպէս որ մամուլը անկարող է քննա-
դատել հարցը եւ իր վճիռը տալ այդ հար-
ցի մասին:

Ինչքան մենք յորդորում էինք մեր թղթ-
թակցներին հաղորդել մեզ կալուածական
խնդրի մասին ներքինը, — մինչեւ այժմ մեր
ջանքերը ոչինչ հետեւանք չը հասան: Բա-
ցի մէկ պատահական եւ անկատար թղթա-
կցութիւնից երեւանեան հողային հարցի մա-
սին, մենք ուրիշ ոչ մի թղթակցութիւն
չը ստացանք:

Իրանք գիւղացիները, ի հարկէ, անկա-
րող են գրել, յայտնել իրանց մտքերը, բա-
ցարեւ հարցը եւ պաշտպանել մամուլի մի-

ջոցով իրանց շահերը: Բայց ի՞նչ պէտք է
ասենք երեւանի խնդիրը հեղինակի մասին...
Որքան ուսում առած կալուածատէրեր, որ-
քան բարձր ուսում ստացած իրաւաբաններ,
աղբօխտներ, պաշտօնականներ կան երեւա-
նում... Միթէ նրանցից ոչ մէկը, տեսնե-
լով որ «Մշակը» հետաքրքրվում է այդ հար-
ցով, չէր կարող հաղորդել մեզ ճիշդ տե-
ղեկութիւններ մեր կալուածական խնդրի
մասին:

Երկուսից մէկ. կամ նրանք իրանք որոշ
կերպով չեն ուսումնասիրել եւ իրանք չեն
հասկանում կալուածական խնդիրը, ուրեմն
ամաչում են խոստովանել իրանց այդ տը-
գիտութիւնը, կամ նրանց մէջ տիրում է
կատարեալ ապատիւ, անտարբերութիւն
գէպի ամեն հասարակական խնդիրներ:

Մենք խօսք չենք գտնում մեր խնդիր-
դէպիցի այդ յանցաւոր անտարբերութիւնը
իր յատուկ բառով դրոշմելու: Համար, նոյն
իսկ այն ժամանակ երբ վճռվում է մեր
գիւղական դատի անտեսական գոյութեան
մահալան եւ կեանքի խնդիրը, որից կախված
է նրա եւ մեր երկրի ամբողջ ապագան:

Մենք կրկնում ենք որ «Մշակի» № 100
մէջ տպված երեւանի թղթակցութիւնը, որ
յետոյ արտատպւեցաւ ամբողջութեամբ
«Кавказ» լրագրում եւ Մոսկովայի «Рус-
ский Кустур» լրագրի № 166 մէջ,
շատ անկատար էր եւ կարող էր խոշոր
սխալներ ունենալ, բայց լրացած լինելով
այն հարցերով, որ գնում է այժմ մեր լր-
ագրի № 153 մէջ պ. Գալանթարի, այդ
թղթակցութիւնը եւ նրա առիթով մեր
գրված առաջնորդող յօդուածները № 100

եւ 101 մէջ, դարձեալ կարող էին ծառայել
մեր թղթակցներին որպէս մի պրօգրամ
կալուածական խնդրի վրա աւելի մանրա-
մասն եւ ճիշդ տեղեկութիւններ մեզ հա-
ղորդելու համար: Թող հաղորդած տեղե-
կութիւնները միակողմանի լինէին, թող
նրանք հաղորդված լինէին գործի մէջ հե-
տաքրքրված մի կողմից, այն է կալուածա-
տէրերից, — քոյթ չէ, մենք կը կարողա-
նայինք մեր եղբայրացիութիւնները դուրս
բերել ստացած նիւթերից:

Մեզանում տիրում է այնպիսի սարսա-
փելի ապատիւ, այնպիսի անտարբերութիւն
գէպի ամեն հասարակական խնդրի, որ մի-
չե անգամ գործի մէջ անմիջապէս հետա-
քրքրված եւ շահ ունեցող անձինք չը գի-
տեն, զանում են պաշտպանել իրանց շա-
հերը: Մի թուրք կալուածատիրոջ, մի որ
եւ է Արաս-Վուրի-Խանին երեւանեան նահան-
գում ներկի է չը դիմել հայ լրագրին ամ-
բողջ երկրի համար կենսական խնդիրը մա-
մուլի միջոցով վիճարկելու եւ վճռված
տեսնել ուղեւորու համար, բայց մի բարձր
ուսում ստացած հայ կալուածատիրոջ կող-
մից այդ տեսակ յանցաւոր անտարբերու-
թիւնը անհերքելի է: Մեզանում բերօրեա-
տական ոգին այն աստիճան խոր արմատ-
ներ է գցել իւրաքանչիւր մարդու մէջ, որ
ոչ ոքի մէջ այլ եւ չէ մնացել հասարակա-
կան համբաւելութեան գգացմունք, ոչ ոք
չէ մտածում ընդհանուր գրութեան վրա,
այլ իւրաքանչիւրը մտածում է « ես մի կերպ
կազատեմ իմ կալուածների մի մասը, կա-
ռավարութեանը խնդիրներ, աղբիւսագրեր
տալով, իմ գործի մասին հոգալով, իսկ

մնացածներին, իմ հարեանների դրութիւնը
ինչ կը լինի, ինչ ի՞նչ փոյթ: »

Կրկին դիմում ենք երեւանի նահանգի
մեր հայ խնդիրագրողին, մեր բարձր ու-
սում ստացած, մանաւանդ իրաւաբա-
նութեան մէջ մասնագէտներին եւ խըն-
դրում ենք նրանց մեծ ուշադրութեամբ
կարդալ գոնէ «Մշակի» 100, 101, 153
համարները, ուսումնասիրել այդ համարնե-
րում տպված յօդուածները կալուածական
խնդրի առիթով եւ հաղորդել մեզ ճիշդ
տեղեկութիւններ այդ խնդրի մասին:

Կան բազմաթիւ ազգերի պատմութեան
մէջ, երբ որ անտարբերութիւնը գէպի հա-
սարակական շահերը եւ հասարակական խըն-
դիրները ամենամեծ յանցանք պէտք է հա-
մարվի, մանաւանդ լուսաւորված դասակար-
գի կողմից:

Եթէ հասարակական ծանր բազմաթիւ
բարձր, համալսարանական ուսում ստացա-
ծը չը պէտք է ջոկվի իր եսականութեամբ,
իր անտարբերութեամբ, իր փորի վրա մի-
մայն մտածելով, կամ վերջապէս իր տղի-
տութեամբ եւ դարդակ թղթախաղի մէջ իր
օրերը անցնելով՝ մի որ եւ է ազէտ հաստա-
փօրից, — այն ժամանակ ինչի՞նչ է պէտք
մեզ բարձր, համալսարանական ուսումը,
Այդ տեսակ ուսում մի գործ չարժէ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՈՒԹԱՅԻՍԻՑ

Օգոստոսի 18-ին

Վերջին ժամանակներս Գուրգիսիում սաս-
տիկ շատացաւ զենքի հարուածով մարդատա-
կան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 9 օգոստոսի

Մինչեւ մի միւլթարական փոփոխութիւն տեղի
ունենալը հայոց գործերի մէջ, առաջ ընկաւ ան-
տուր իրողութիւնը, որի մասին անցեալ ան-
գամ գրեցի—այդ Սիւսի կաթողիկոսի բաժանվին
է Կ. Պօլիսի պատրիարքի իրաւասութիւնից: Ու-
րեմն Ներսէս պատրիարքը այսուհետեւ էլ իրա-
ւունք չունէ խօսելու Երուսաղէմի եւ Թիւրքիայի
առաջին յանուն բոլոր տաճկահայերի, որոնց
գրեթէ մեծ մասը, փոքր Հայաստանի եւ Կիլի-
կիայի հայերը, անցնում են Սիւսի կաթողիկոսի
իրաւասութեան տակ: Քիչ խոչնդոտներ կար հա-
յոց գործի գէտ, մէկն էլ իմայ դուրս եկաւ...
Բայց ո՞վ է մեղաւոր այս իրաւամբ մեծ ամբաղ-
տութեան մէջ. Սայթե-փաշան, Սիւսի կաթողի-
կոսը—թող փաստերը խօսեն: Այսպէս ինչը ամիս
է, որ Սիւսի կաթողիկոսը Կ. Պօլիս եկած աղա-
չում է Կ. Պօլիս հայոց ազգային ժողովից ուշա-
գրութեան առնել իր պահանջները եւ որ եւ իցէ
բաւարարութիւն տալ նոցա, այդ պահանջները
ի հարկէ ներթափանց են, որոնք կայանում են
նախ կաթողիկոսի աթոռի չը գիտեմ քանի հա-
զար դրուշ պարտքի մէջ, երկրորդ Այնթապի մէջ
մի արուեստանոց հիմնվելու, որով կարելի լի-
նի փոքր ի շատէ ջլատել ամերիկացից եւ անգ-
լիացից միսիոնարներին յաջողութիւնը, որոնք փո-
խանակ Կ. Պօլիսի գեղեցիկների նման չըլա՞յ պո-
ւարու, սոսու ու փուս զանազան տեսակ տեղա-

կան արհեստներ եւ արուեստներ են զարգացնում
Կիլիկիայում, եւ հազարներով որսում ոչ միայն
զեւաճան աշակերտներ, այլ եւ ամբողջ ընտանիք-
ներ:

Այս ինչ ամուսայ մէջ, ասում եմ, ազգային
ժողովը փոխանակ աշխատելու որ եւ է կերպով,
գործով կամ փաստելու եւ երաշխաւորեալ խոս-
տումով, հանգստացնելու Սիւսի կաթողիկոսին,
վերաբերվել է միայն թուրքերի բարձրութիւնից,
յանձնարարելով այս «Թիւրքիայի» կրօ-
նական խորհրդի ատենանիստ: Կրօնական խոր-
հուրդը ի հարկէ, ինչպէս եւ բոլոր ուրիշ խոր-
հուրդները, ինչպէս դատական, եւ լուսմտա-
կան, ուսումնական եւ այլն, համարելով ի-
րան միւլթարականութիւնը, որով միմյանց մէջ
եւ ասում է ministère des cultes, ministère de
la justice, ministère des finances, ministère de
l'instruction publique եւ այլն, «գրադվելով», ա-
սում եմ, լուս աշխարհի կապական օյններով,
ազգային ժողովի ministère des cultes ոչինչ ու-
շադրութիւն չէ դարձրել Սիւսի կաթողիկոսի ըս-
տիպողական եւ կարեւոր պահանջներին: Ընդհա-
կառակը այդ խեղդատակ ministère-ը, այնպիսի
անտարբերութիւն եւ արհամարհանք է ցոյց տուել,
որ կաթողիկոսը էլ չը կարողանալով ուրիշ
կերպ իր վերաւորված պատիւը պաշտպանել,
քանիցս եկեղեցիներում բարձրված քարոզներ
եւ խօսել, յարձակվելով ժողովի թոյլութեան եւ ան-
տարբերութեան վրա գէպի ազգային գործերը:
Այստեղ եւ դարձեալ փոխանակ հասկանալու եւ
բաւարարութիւն տալու, արհամարհանքով վերա-
ւորված կրօնական մարդու դերազգացութեան,
հանողը աշխատել է միայն զրուշական մամուլը
միջոցով աւելի եւ խայթել եւ վերադարձնել կաթո-
ղիկոսի անձնական եւ կրօնական պատիւը: Այս-
պիսի ստոր վարմունքներից եւ բռնած ուղղու-

թիւնից յետ, էլ քիչ եւք կարող էր մնալ Սիւսի
կաթողիկոսին բացի այն, որ վեր կենալ գնալ
Սայթե-փաշայի մօտ առելու չտուէք ինչ բարձր
առանձին եւ Կ. Պօլիսի ազգային ժողովից անկախ
իրաւասութեան: Կոյրին ինչ է հարկաւոր—եր-
կու աչք, ասում է առաջ. Սայթե-փաշայից այդ-
պիսի երկպառակութեան էր կարօտ, որով
խսկոյն եւ իմ յանձնեց կաթողիկոսին նորա ու-
ղած հրամանագիրը:

Ազգային ժողովի այս ինչ ամուսայ մէջ բռն-
ած թոյլ եւ ապկար ընթացքը որչափ եւ իցէ
փոխել տալու մէջ, Ներսէս պատրիարքը, ի հար-
կէ, բոլորովին անկարող էր, որովհետեւ ինչպէս
սահմանադրական հաստատութեան (որը եթէ
Աստուած մի օր առաջ անի՞ծէր, վաղուց արդէն
մեծ բարիք արած կը լինէր հայոց ազգին) գլուխ,
հրդի քուէարկութեանց որ եւ է մի բան անել
նորա որոշվելի հետ. մանաւանդ որ այս միջոց-
այստի է, այնպիսի էր զրուած ազգային ժողովի
սեւեռն ministère-ներից, որ ինքն էր ուղղում
ձեռք քաշել իր պաշտօնից:

Այսպէս ուրեմն, երբ ազգային ժողովի բռնած
զրուելի ընթացքի շնորհիւ տեղի ունեցաւ մի
այսպիսի զգալի անբաղաւորութիւն, ամենքն էլ վեր
կը կենան կասեմ միայն, թէ վաթողիկոսը կա-
շառված է զրաւաճան է՞ եւ այն եւ այլն: Ինչ եւ
է նա, բայց միթէ ինչը ամիս նա չէր աղաչում
ազգային ժողովին վերջ տալ իր գործին, որով-
հետեւ ծեր եւ հիւանդ լինելով չէ կարող տանել
Կ. Պօլիս օդը եւ երկար ապրել այստեղ: Ո՞ւր
մեղքն է հիմայ, «կաշառի», չղաւաճանութեան
թէ Կ. Պօլիսի ազգային ժողովի մէջ նստած իրիտ
soi-disant միսիոնարները...

Ոչ պակաս հետաքրքիր է թէ քիչ էր չինում

այս բոլոր ժամանակ Կ. Պօլիսի հայ մամուլը:
հիմ, նա մեծ բաներով էր պարագլուծ, նա Գամ-
բելթայի ճառերն էր արտատպում եւ Վիկտոր
Հիւգօյի համար Ֆրանսիայում կանգնացնելի ար-
ձանի հարցերով էր զբաղված: Իսկ ազգային
ժողովի պարտաւորութեանց եւ իրաւութեանց
վրա նա չէր համարձակվի խօսել եւ մի բառ ան-
գամ ասել, որովհետեւ կարող էր մի կամ երկու
բաժանորդներ կորցնել: Այն ձեւ, քիչ ասել Կ.
Պօլիսը, ինչպէս հայոց գլխաւոր մտաւոր կենտ-
րոն իր տպարաններով, եթէ լրագրիներով, ազ-
գային ժողովով, միսիոնարներով, զիւլումանե-
րով եւ այլն: Այդ բոլորը չունէ ոչ թէ Թիֆլիսի
մի հատ փնտելիլիցնոր մտաւոր եւ բարոյական
ուժը եւ ամբողջութիւնը, այլ նա աւելի ստոր է
նաեւ, քան թէ Ախալցխայի դուռայի մէջ նստած
միսիոնար խումբը: այդ խումբը հարկւր անգամ
աւելի գործունեայ է, հայրենասէր, օգտաբեր,
ազատ եւ անկախ, քան թէ Կ. Պօլիսի բոլոր չմե-
ծապատիւ մուրացկան խմբակները, գետնա-
քարէ էֆէնդիները եւ տիրացու զիւլումանները:
այս ամենը վերոյիշեալ ցաւալի եղելութիւնը չէ,
միայն որ հաստատում է, այլ եւ շատ ուրիշ
բաներ:

Օրինակ. սովը երբ սկսվեց Հայաստանում,
տաճկահայ մամուլը երկու-երեք ամիս ուսուա-
հայերից յետ միայն արժան համարեց մի քանի
խօսք ասել նորա համար, ինչպէս ուշադրութեան
հաղիւ արժանի մի բանի վրա. Մասիսի հա-
մարները վկայ են դուրս. եւ այս ոչ թէ նորա
համար էր, որ սոքա երկու ամիս մեզինք աւելի
ուշ լուր ստացան Հայաստանից ամեն օր եկող
հարկւրաւոր մարդիկներից, քան լիցի, այլ սոքա
զբաղված էին այդ ժամանակ եւ չըբանելի
Ֆրանսայի գործերով: Վերջապէս սովը այստեղ
եւ յայտնի եղաւ եւրոպական մամուլի շնորհիւ:

նուրբին: Ամսիս 8-ին սպանեցաւ մի դաշտային հարուածով պ. Կ. Մղերբեանց, քաղաքից 8 վերստ հեռավորութեամբ, չանցած դեռ եւս մի շարքով նոյն վիճակին ենթարկվեցաւ մի կառավարման խմբակը քաղաքին կենտրոնում գիշերվայ Ժամի 10-ն: Երկու մարդասպաններն էլ իմերելներ են, գործը յանձնված է քննիչին: Յանկալի կը լինէր որ տեղական ոստիկանութիւնը ազատէ մեզ այսպիսի զոհերէն դէպքերից եւ իր հակողութիւնը եռապատէ:

Մի դարմանալի եւ ամօթալի դիպուած կը պատմեն որպէս զի ընթերցողը աւելի լաւ դադարի կազմէ տեղացոյց կոպիտ եւ գաղանակաւ բնաւորութեան վրա: Նորբերումս քաղաքում պատահում է հետեւեալ բան. մի գիւղացի սալով բերում է փայտ եւ կանգնում է սովորական տեղը, փողոցի վրա: Տան տէրը հրամայում է հեռացնել սալը իր տան առջեւից, խեղճ գիւղացին ուշացնում է այդ բանը, այն ժամանակ համարձակ տանտէրը դուրս է բերում ատրճանակ եւ արձակում է եղբ վրա. կենդանին իսկոյն արեւոյ մէջ շարժանքով գետնի վրա է ընկնում, իսկ ողորմելի գիւղացին սկսում է լալ: Ստակած եղբ տանում են ոստիկանատուն: Տեսարանը կատարվեցաւ ոստիկանատան դիմաց:

Շատաւում եմ յայտնել ի գիտութիւն հայ ընթերցողաց, որ Բուլթայիում չորհիւ հայր Լաւրանցի արդէն վերացվեցաւ այն փեսայաւոր եւ խեղճ ժողովրդի տունը քանդող սովորութիւնը, որ անուանվում է ք ե լ ե խ ը: Ինչպէս պատմում են բաւական յաջողութիւն է ունեցել այդ նորութիւնը, ցանկալի է որ միւս հայաբնակ քաղաքներ էլ օրինակ առնեն մեզանից: Եթէ որ նմանակալի տեղը կարողութիւն ունի, քեյիսի մէջ գործ դնելի որ եւ մասը նուիրում է աւելի սուրբ բանի, այն է ուսումնարանին:

Յ. Ամիրաղեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

12-ին օգոստոսի

Որբուն մնացն էր տարածվել մեր քաղաքում թէ տեսուչ Ս. Մանդրեանի տեղ նշանակվում է պ. Վ. Աղաբեկ: Կարապետ վարդապետը առանց հոգաբարձութեան իմանալու հեռագրում է Էջմիածին Անդրեաս եպիսկոպոսին թէ մեր հոգաբարձութեանը համաձայն չեն Աղաբեկի տեսչութեան, իսկ երբ տեսնում է որ այդ լուրը համակրելի չէ, հոգաբարձութեան կողմից կամ գուցէ շուտով էլ իրագործվի, նաև որ այս բանի

ինչ արեցին Կ. պօլսեցիք, ինչ տուան նորա սովետից իրանց (վսեմաշուքներ) ձեռքով, որոնց մէջ այնպիսիներ կան, որոնք մի չնչին կապերով համար մինչև հիմայ եւ թիպիներով ոսկի են չարտում. այդ «վսեմաշուքներ» հագրել թէ մի քանի հարկեր ոսկի տուան, այլ սովետից յանձնաժողովը կաղմկեց միայն գաւառացի հայերից, որոնց մինչև այդ ժամանակ արհամարելով Կ. պօլսեցիք միայն ի մեք ու չէին անուանում: Երբ բանը տեղ տեղ հասաւ, երբ հարկաւոր եկաւ հայրենիքին մի իրական օգուտ հասցնել, յայտնեց որ բոլոր գործ տեսնող մարդիկ լոկ ի մեք ու չէին երկն բաղկացած, ինչպէս սովետից մասնաժողովը այնպէս եւ բոլոր նուիրաբեր մարդիկ: Իսկ իրանք Սօսիւնի քաղաքակիցները շարունակում էին հոգաբարձութիւններ անել Վիկտոր Հիւգօյի եւ Լիտթէի վրա: Եւ զարմանալին այն է, որ հարկեր անգամ համողվելով, որ գործնական եւ արդիւնաբեր մարդ եթէ կան Կ. Պօլսի մէջ, բոլորն էլ գաւառներէն նոր եկած մարդիկ են, Կ. Պօլսի ազգային ժողովը մինչև հիմայ եւս այդ մարդիկներին չէ ընդունում իր մէջ, վստաստող գործը այնտեղ է հասնում, որ Մոսկի երեսփոխանը արդէն մի քանի տարի շարունակ Ստեփան Փափաղեան ասված արաբածն է, որը այս առաջնորդի, այն վարդապետի, եպիսկոպոսի վրա յարձակվելով կամ նորան անարժանապէս պաշտպանելով չորս-հինգ տարվայ մէջ կարողացաւ այդպիսի հարստանալ, որ կարողացել է Պերայի մէջ երեք քարուկրեայ հայաբնակ տներ շինել: Մի մոռանալ, որ այդպիսի տներ չէնող մարդը ոչինչ օրինչ պարագուծնք եւ մասնագիտութիւն չունէ, բացի ազգային ժողովի մէջ երեսփոխանի պաշտօն վարելը, իսկ մինչև երեսփոխան լինելը նա մի աղքատ վարժապետ էր, որ հագրել կարողանում էր ամիսը 25 ր.

մէջ իր նախանձութիւնը յայտնի է դարձել ամենքին, երկին հեռագրում է Էջմիածին թէ այն լուրը բոլորովին ինքը չէ հաղորդել, ընդհակառակ ինքը շատ ուրախ կը լինի Աղաբեկի ընտրվելով:

Չենք իմանում կարապետ վարդապետի այս նախանձութիւնը իսկ Աղաբեկից պէս մի փորձառու մարդու համար է, թէ դպրոցների վերականգնելուն համար:

Կարմրուկ եւ սկարլատինա հիւանդութիւնները դեռ շարունակվում են մեր քաղաքում, մանաւանդ թուրքաց բաժնում. չը կայ օր, որ երկու կամ երեք երեխայ զոհ չը գնան այդ համաճարակ հիւանդութիւններին:

Անցեալ երկուշաբթի գիշերը ժամը մէկին այստեղ պատահում է երկրաշարժ. քաղաքի թուրքերը դուրս են փախչում տներից սաստիկ աղաղակ բաժարանքով, թէ այն գուշակողը սը-խալվել է այս գիշերը պիտի վերջանայ աշխարհ, բարեբաղդաբար շուտով երկրաշարժը վերջանում է, իսկ խեղճ թուրքերից շատերը ամբողջ գիշերը անց են կացնում դրում, սպասելով աստղերի թափվելուն եւ միւս գուշական նշաններուն, բայց ի դուր է անցնում այդ ամենը, ոչինչ չէ պատահում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Պիտիպոսի, 17-ին օգոստոսի

Վեց տարի է, որ ես սիֆիլիտական ցաւով նեղվում էի. բժշկներին շատ փող էի տուել, ե հնար չէր լինում ինձ, այդ ցաւից ազատվելու: Վերջապէս, պատահեցաւ Պիտիպոսիում մի հայ երիտասարդ, Վերին-Աղուխից եկած, որը այստեղ, ժամանակաւորապէս, վաճառականութեամբ էր պարագում: Այս երիտասարդի հետ ծանօթանալով այս ամառը, իմացայ, որ իմ ունեցած ցաւի բժշկելը գիտէ: Վասնորոյ առաջարկեց ինձ էլ բժշկելու: Ամենահեշտ կերպով, ընտանեկան միջոցներով բժշկեց ինձ եւ ստացաւ ինձանից որպէս վարձատրութիւն 25 րուբլ: Ինձ բժշկող երիտասարդի անունն է՝ Յակոբ Գասպարեան Բախանց:

Սահակ Կոփճաեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 20 օգոստոսի

Յարգելի խմբագիր. Կարգալով ձեր պատուելի լրագրի 153 համարի մէջ թղթակցութիւն կիւլափոխիցի, որտեղից ուղարկված էր ձեզ 1 րուբլ:

ստանալ: Տեսնելով հիմայ թէ իր երեք տները շատ են աչքի ընկնում, նա ամեն տեղ ասում է հիմայ թէ այդ տները իր կնկայ վրա ստացած «օժիտ» է, բայց զարմանալի է, որ այսպէս օժիտներ երեսփոխաններից շատերը ստանում են ոչ այն ժամանակ, որ ամուսնանում են, այլ այն ժամանակ, երբ մի կամ երկու տարի երեսփոխանի պաշտօն են կատարում ազգային ժողովի մէջ...

Կ. Պօլսի մէջ շատ տարիներ է, որ զանազան ընկերութիւններ են հաստատվել Կ. պօլսեցի երիտասարդներից, բայց ոչ մէկը այդ ընկերութիւններից չէ կարողացել դպրութիւն ունենալ առանց գաւառացի երիտասարդների, որոնք երբ հեռացել են գործից, զգլվելով իրանց ճառախօս դարձակաբան ընկերներից, իսկոյն այդ ընկերութիւնները քանդվել են: Նոյնը չէ գուշակել տալի արդեօք Միացեալ ընկերութեան անօրէն ժողովից երեք ամենագործ անդամների այս օրեքըս հրաժարվելը՝ պ. պ. Կիւլապեանի եւ Ստեփանի, որոնք կենսաբանք են եւ պ. Թօփալեանի, որը գիւրիւնցի մի գործնական մարդ է: Ինչ է պատճառը այս հրաժարման եթէ ոչ այն, որ այդ ողջամիտ եւ իրական արդիւնք փնտրող մարդիկը զոհուել են իրանց պաշտօնակից ճառախօս Բերբերեան եւ ընկերութիւնից, որոնք երկար տարիներ միջնադարեան սիւլաստիկ վարժապետի դերը կատարելով Կ. Պօլսի մէջ, միայն չընկն են վերացական աշխարհում, ոտանաւորներ դրել, Վերջինի եւ Գանտէ թարգմանութիւնները կարողացել եւ Հայաստանի համար «լոյս» ալ առաջակել...

Թէ ինչ ընթացք բռնեց Կ. Պօլսի մամուլը Աղաբեկի ընտրութեան վերաբերութեամբ, այդ մասին արդէն մեզ յայտնի է, իսկ թէ մինչև թր աստիճան սովոր է Կ. Պօլսի հայ մամուլը ա-

լի աղբոգութեամբ նպատակաւ, այն է ի նպատակ վաճառելու Կարապետ Մանդրեանի հօր արձան կանգնեցնելու, եւ ես սաստիկ համակրելով այդպիսի մի աղբոգութեամբ ձեռնարկութեան, շտապում եմ ուղարկել ձեզ ներփակեալ նամակաւ 1 րուբլ ի նպատակ այդ գործի:

Իմ կողմից ես կառավարվելի այդ ձեռնարկութեան զլխաւորներին որ արձանը կանգնեցնել աւելի յարմար կը լինէր մեր բաղամամարդ հայաբնակ քաղաքներից մէկի մէջ, օրինակ Թիֆլիսում:

Իսկ եթէ գործը որ եւ իցէ կերպով չիբազործվի, որ բոլորովին անհաւատալի է, այն ժամանակ խնդրեմ այդ 1 րուբլ հասցնէք Միացեալ ընկերութեան:

Յակովբ Գիրաբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Петербургская Газета» լսել է որ բժշկների շրջանում խօսակցութիւն կայ որ շուտով կառավարութիւնը թոյլ կը տայ արտասահմանում ուսում աւարտած ուսանողներին բժշկներին պրակտիկայով պարագել Ռուսաստանում, առանց նորից հարցաքննութիւն տալու Ռուսաստանում: Այդ լուրը մեծ աղմուկ է գցել բժշկների շրջանում:

Լրագիրները լսել են որ եկող տարի պէտք է լինի Ռուսաստանում եկեղեցական ընդհանուր ժողով, որտեղ պէտք է վճարեն ուղղափառ եկեղեցուն վերաբերեալ մի քանի կարևոր հարցեր:

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի բէալական ուսումնարանի աշակերտներից հրատարակած 1 օտո, որի դինն է 50 կոպէկ եւ տպագրված է Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թիւին: Այդ 1 օտոի վրա սովորական թանաշանների տեղ գործ են անված հայոց սյրբեանքների տառերը: Այդ 1 օտոն հրատարակված է մանուկների համար եւ նպատակ ունի վարժեցնել հայ մանուկներին հայոց այբբենարանի մէջ: Վատ չէր լինի եթէ մեր լոտո-խաղացող, հայերէն լեզու ատող հայ տիկիներն ու օրորդներն էլ այդ 1 օտո գործածէին: Գոնէ այսպիսով կը սովորէին հայերէն կարգալ: 1 օտոն ծախվում է յօգուտ բէալական դպրոցի հայ աշակերտների ապագայ գրագրանի:

Շնորհակալութեամբ ստացանք «Փորձ լեզուա-

նանց շահի եւ կաշառի ակնկալութեան, ոչինչ, մի տող անգամ գրել—աճաճ մեղ օրինակ լեզուութի գետնաշարժից յառաջացած սոսկալի հետեւանքները. երեք ինքները համոզվեցիք, ստանալով սոցա լրագրից, թէ ճիշտ ինչ խօսեց այդ անբաղդութեան զոհերին օգնելու համար, մինչդեռ Վիկտոր Էմանուէլ Վիկտոր Հիւգօյի արձանի համար Մասիսի Բիւզանդ ասվող տիրացու «պուրելիստ» էլ ժողովրդի զահան տալու:

Հէնց այսօր եկան ինձ մօտ Սվազի վիլայեթից արդէն ամբողջ ամիս Կ. Պօլսի եկած պատուիրակները ուսուցիչ դասաւանդատան աղբիւսագիր տալու համար Կովկաս գաղթելու դիտաւորութեամբ, կարողացել արդեօք այս մասին մի բան այստեղի լրագրութեան մէջ. քաւ լիցի, ինչպէս կարելի է այնպիսի հարցերով զբաղվել Կ. Պօլսի հայ մամուլին, որոնք փարայ չեն կարող լցնել տալ Կ. Պօլսի մամուլի էջերը միայն դաւնազան անվերջ զանգարաններով առաջնորդների վրա. զիցուք հայոց կղերն էլ մի մեծ համակրութեան արժանի պտուղ չէ, բայց տարին տասն եւ երկու ամիս լցնել լրագիրներին էջերը միայն այդպիսի հարցերով—այստեղ մի ուրիշ խորհուրդ կայ, որ փարայի խորհուրդն է: Այսպիսի շահամուտ, ստոր եւ ցեխոտ ուղղութեան շնորհիւ, բանը հասել է հիմայ այնտեղ, որ Հայաստանի բոլոր ժողովուրդը մնացել է այժմ առանց առաջնորդների, որովհետ 65 առաջնորդներից մնացել են իրանց տեղերը միայն երկուսը, իսկ մնացածները էլ յոգնելով այս լրագրին այն լրագրին կաշառ ուղարկելուց, եկել են անձամբ խօսելու եւ բացատրութիւն տալու Ներսէս պատրիարքին, այն, յիշուել երեք մարդին Թիւրքիան է կանչել տուել, այն է Սվազի, Մուշի եւ Արար-

գիտական մի դրութեան» գրքոյը, հեղինակութիւն Ս. Թադեոսեանի: Տպված է Թիֆլիսում Թ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թիւն եւ հրատարակված է Ա. Գրիգորեանից: Գրքոյի գինը 50 կոպէկ է:

Новости» լրագիրը հաղորդում է որ զանազան արտօնութիւններ, որոնք տրված են Ռուսաստանում բնակվող օտարազգի կօլոնիստներին, շուտով վերցրած կը լինեն օրէնսդրական ճանապարհով:

Լրագիրները լսել են որ գրքի հեղինակը, որ նորբերումս հրատարակել է Լայպցիգում ուսանելի լեզուով եւ որի վերնագիրն է «Նամակներ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին» գրեւորալ Ֆադէեֆն է, որ առաջ ծառայում էր ուսուցիչ դիւանաւան ծառայութեան մէջ, յետոյ եփպոստի խեղիվ մօտ փաշա էր դարձել, յետոյ ծառայում էր Սերբիայում եւ Չեքոսլովակիայում: Նա պատկանում է սլովականօֆիլների կուսակցութեանը:

Այս օրերս հրատարակվել է Բերլինում ուսանելի լեզուով մի գիրք «Что нужно» (Ինչ է հարկաւոր) վերնագրով: Գրքի հեղինակը, Գրիգորի դը-Վոլան, խօսում է իր գրքի մէջ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին:

Ստացանք յօգուտ «Journal d'Orient» լրագրի հետեւալ փողերը. Գեմբեանցից 4 րուբլ, գնդապետ Իւզդաշեանցից 4 ր., Թ. Ե. Ն. Լալայեան եղբայրներից 8 րուբլ, «Մշակի» խմբագրութեանց 8 րուբլ, Զաքարիա Գրիգորեանցից եւ Յարութիւն Շահաղիզեանցից 8 րուբլ: Ընդամենը 32 րուբլ: Վերջին երկու պարոնները մեղ գումար են որ պատրաստ են նպատակը հայոց օրգանին, եթէ մինչև անգամ նրա համարները նրանց ձեռքը չը հասնին, այլ նրանք միայն այն համոզուենք կունենան որ լրագիրը հրատարակվում է եւ Եւրոպայի կարգում է հայերի վրա յօգուածներ: Մենք մեր կողմից, ամեն միջոց գործ կը դնենք ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին «Journal d'Orient» յօգուածների հետ եւ խնդրում ենք հայերին իրանց առատ նուէրներով նպաստել այդ լրագրի դոյուլթեանը: Վերջապէս հայերը ունեն իրանց օրգան Եւրոպայում: Պահպանենք նրան:

Մեզ հաստատապէս տեղեկացնում են որ սեպտեմբերին մեր քաղաքում լինելու հնազանդական ժողովին մասնակցելու է Բերլինի նշանաւոր

կիրի առաջնորդներին, իսկ մնացած 60 հոգիք ինչ են չինում այստեղ:

Այս ամենից հետեւում է այն, որ տաճկահայերի շահերը մեծ փառքի մէջ են. Տէր մի արասցէ եթէ Ներսէս պատրիարքը յանկարծ մեռաւ, ինչպէս հնչու է պատահել իւրաքանչիւր մահկանացուն, Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը մընայ կաշառակուռ, դրուշակաւ, ստոր եւ ապիւրատ երեսփոխաններ եւ մամուլի յոյսով. ինչ կարող է դուրս գալ այդ ամենից դժուար չէ գուշակել—Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը գաղթի, կը հալվի ու կը կորչի իր վշտաբեր հողի երեսից, ինչպէս որ այդ անուամ են այժմ Սվազի մօտ 40 գիւղ հայ կաթօլիկ ազգաբնակչութիւնը որոնք գլխաւոր յոյսը դրած է, ինչպէս իրանք ասեցին, Արդուինի գաւառապետ պ. Միքայէլ Մէպիսովի ոսկէլից խոստումների վրա: Միթէ պ. Մէպիսովը չը գիտէ թէ ուսուցիչ քաղաքականութեան եւ շահերին ձեռնադրել է Հայաստանը հայերից զրկելը թէ կաթօլիկական լեզուայնութիւնը է թեղաղորմ նորան բանակցութիւնների վարել Սվազի բաղմաթիւ հայ կաթօլիկների հետ: Այս մասին մտադիր եմ վաղը հրատարակապէս, այստեղի լրագիրների միջոցով յիշեցնել Աղաբեկին, յանձնելով Հայաստանից կորցող իւրաքանչիւր հայի կեանքը նորա խղճին...

Ուրեմն աճա իրերի դրութիւնը այժմ, երբ Ներսէս պատրիարքին հարկաւոր էր եթէ ոչ նիւթական (որի վրա խօսը էլ չէ կարող լինել) գոնէ բարոյական իրաւոյսը Կ. Պօլսի ինտելիգենցիայի կողմից, բայց այդ ինտելիգենցիան տաճկաց միւլդիւրներից եւ կայանակներից արդեօք մի բանով յետ է մնում...

Գրիգոր Նիկողոսեան

գիտնական և գերմանական ազատամիտ կուսակցութեան պարագլուխ, հնազանդ, բնագետ և էթնոգրաֆ, պրոֆէսոր Վիլհելմ, որ շուտով գալու է Քիֆիլիս:

«Москов. Телег.» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Կենտրոնական կառավարութեան կարգադրութեան հիման վրա Ղարսի և Բաթումի տեղական վարչութիւնների, նոյնպէս և Սուխումի վարչութեան ձեռքով ժողովուրդն այժմ ճիշդ և մանրամասն տեղեկութիւններ այդ երկիրների այն բոլոր տեղերի վրա, որոնք յարմար են բնակեցրած լինելու»:

«Тифлисская Объявления» լրագրում կարդում ենք: «Յայտնի է որ Ղարսի նահանգի Ռուսաստանին միացնելուց յետոյ ամսվապէս նահանգին հարեան Ալեքսանդրապոլի գաւառի անհող հայ գիւղացիներից շատերը խնդրեց ներկայացրին թոյլ տալ նրանց բնակվել Ղարսի նահանգի այն հողերի վրա, որոնք ազատ թողվեցան այդ երկրից գաղթած մասնատեղացիներից, բայց հայերը մերժում ստացան: Այժմ տեղական վարչութիւնը խնդրում է կառավարութիւնից նշանակել 400,000 ռուբլ աշխատակալ որ Ռուսաստանի ներքին նախնականքից բերվեն Ղարսի նահանգի մէջ բնակեցնելու համար մի քանի հազար բուն ուսու երկրագործ ընտանիքներ»:

Ստացանք «Journal d'Orient» լրագրի համար 4 թուրը պ. Անտոն Քաղաքեանցից, Ռուսին առաջվայ փողերի հետ կանէ 36 թուրը:

Ստացանք մի թիֆլիսեցի հայ ստորագրութեամբ մի նամակ, որի մէջ զրած էր 1 թուրը, և որով անյայտ պարտք խնդրում է մեզ յատկացնել իր նուէրը Մանկունու համար զբոսայգի արձանի կառուցմանը: Իսկ եթէ այդ արձանի կառուցանելը չի աջողվի, աւելացնում է նուիրատու պարտքը, այն ժամանակ նա խնդրում է յատկացնել այդ 1 թուրը Վիլենայի հայոց օրգանի օժանդակութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական զինուորական լրագրիներէից մէկի մէջ տպված է մի յօդուած «Փարիզը, նրա ազգաբնակչութիւնը և ամրոցները» վերնագրով: Այդ յօդուածի մէջ ասված է, թէ այն ստորատեղական աշխատանքները, որոնք կատարված են Փարիզի մէջ 1871 թուականից յետոյ, փոխարինում են գերմանական սահմանների մտտաւորութիւնը: Բացի Փարիզից Փրանսիական կառավարութիւնը կարճ ժամանակամիջոցի ընթացքում ամրացրել է Սեն-Գենրի, Վերսայլ, Սեն-Կլու և Սելի: Ներկայումս Փարիզի պաշարումը մի հսկայական գործ է լինի, որ կը պահանջ է երեք անգամ աւելի պատերազմական ուժեր, քան թէ 1870 թուականի պաշարման համար հարկաւոր եղաւ: Այժմ փարիզը պաշտպանելու համար բաւական է նրան շրջապատող ամրոցների մէջ 20,000 Ֆրանսիական զօրքեր թողնել: Յօդուածի հեղինակը յիշեցնում է Ֆրանսիացիների ազգաբնակչութիւնը և կուսակցութիւնների միութիւնը, երբ հարկաւոր է լինում երկիրը պաշտպանել արտաքին թշնամիների դէմ: Այդ յօդուածի նպատակն է հրաւիրել գերմանական կուսակցութիւններին ոչինչ չը խնայել պատերազմական ծախսերի համար: Ամենքը խոստովանում են, նկատում է յօդուածի հեղինակը, թէ բազմաթիւ թշնամիներով շրջապատված երիտասարդ Գերմանիան դեռ ևս միջազգային շատ վեճեր ունի և նրանց վճռելու համար ամենադրական միջոցը կարող է լինել գերմանական զօրքերի մի փայլուն յաղթութիւնը:

Բրիսլավի մէջ օգոստոսի 16-ին գիշերը քաղաքի պատերի վրա ազգաբնակչութիւնը

ներ էին կայցրել, որոնցով ազգաբնակչութիւնը հրաւիրվում էր ջարդել հրէաներին: Տեղական իշխանութիւնը միջոցներ գործ դրեց անկարգութիւնների առաջն առնելու համար և նրա ջանքերը աջողութեամբ պսակվեցան:

«Morning Post» լրագիրը հաղորդում է, որ չինական կառավարութիւնը Գերմանիայի մէջ 15,000,000 մարկի ազգամայրերէն է պատուիրել: Գեռ էլի նոր պատուէրներ են լինելու:

Քանի որ ազատամիտ կուսակցութեան լրագրիները յանդիմանում են գերմանական կառավարութեանը հումանական նուիրակին նշանաւոր գիշումներ անելու համար, կաթոլիկ կուսակցութիւնը այդ գիշումները չափազանց աննշան է համարում: Կղերականների «Germania» լրագիրը ասում է, որ կիսապաշտօնական լրագրիների յայտնութիւնները թոյլ չեն տալիս ենթադրել, թէ մայիսին հրատարակված օրէնքները կղերի դէմ կը վերաբնակեն, և որ եկեղեցուն առերես գիշումներ են անում, որպէս զի եկեղեցին փոքր առ փոքր ենթարկվի այդ օրէնքների լծին: Լրագիրը համոզված է, որ եկեղեցին յաղթող կը հանդիսանայ պրուսական ապագայ պարլամենտի գործունէութեան ժամանակ:

Մի քանի լրագրիներ հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը մտադիր է Համբուրգ քաղաքը Գերմանիայի երկրորդ մայրաքաղաք դարձնել: Այդ նպատակով Համբուրգի և Ալտօնայի մէջ մի ընդարձակ և շքեղ պալատ կը կառուցվի:

Կոմս Հալֆելդը, օգուտ քաղելով իր ստացած արձակուրդից, հեռացաւ Բերլինից: Սխալ են լրագրիներէից հաղորդած այն լուրերը, իբր թէ նա ուղևորվել է Կ. Պոլիս, որպէս զի յայտնէ սուլթանին, թէ ինքը թողնում է գերմանական զինպանի պաշտօնը Կ. Պոլսի մէջ:

ԻՏԱԼԻԱ

Հոսից անգլիական «Daily News» լրագրին հաղորդում են հետեւեալը: Գենուայի և Սեննայի մէջ ժողովներ կայացան, որոնց նպատակն էր բողոքել պապական իրաւունքները ապահովող օրէնքի դէմ: Գենուայի մէջ ժողովին մասնակցում էին 2000 մարդիկ. ժողովի ժամանակ կարդացվեցան գաւառական յայտնի անձանց նամակները, որոնց թուում էր և Գարիբալդիի փեսայ Կանցիօի նամակը, որի մէջ նա հաղորդում էր մի քանի մտքեր թագաւորի անձնաւորութեան մասին: Շուտով հարկաւորվեցաւ պօլիցիականների միջամտութիւնը, որոնք ժողովը փակված յայտնեցին: Այդ ժամանակ սաստիկ աղմուկ բարձրացաւ, այնպէս որ պօլիցիան ստիպված էր ոյժ գործ դնել դահլիճը մաքրելու համար և անկարգութիւնների ժամանակ երկու մարդ կաշնաւորել: Ժողովը մի թատրոնի մէջ էր, որի շուրջը զօրքեր էին կանգնած: Պօլիցիականները թոյլ չը տուին կարգաւ նոյն նպատակով Հոսի մէջ եղած ժողովի նախագահի նամակը, որի մէջ պապին վերաւորող մտքեր էին յայտնվում:

ԱՌՍՏՐՈՒՆԻԳԱՐԻԱ

«Temps» լրագրի թղթակիցը, որ Պրագայում է եղել չեխական ազգային թատրոնի այրվելու միւս օրը, հաղորդում է հետեւեալը: Ամբողջ ազգաբնակչութիւնը մեծ ցաւի մէջ է: Եւ մարդիկ տեսայ, որոնք փողոցում լաց էին լինում: Թատրոնը մասնաւոր աշխատանքներով էր կառուցված և

նրա համար մեծ զոհաբերութիւններ էին արված: Վնասը 1,000,000 գուլդէն են հաշուում, բացի այն 400000 գուլդէնից, որով թատրոնը ապահովված էր: Թատրոնի բացումը նշանակված էր Օգոստոսի 28-ին: Հրդեհի իսկական պատճառը դեռ յայտնի չէ, բայց կարծում են, որ հրդեհը պատահել է բանաւորների անզգուշութիւնից: Հրդեհի իսկական պատճառները իմանալու համար մի առանձին մասնաժողով է նշանակված: Քաղաքային վարչութիւնը վճռեց շնորհակալութիւն յայտնել երկրի կառավարիչ բարոն Կրաուսին և պօլիցիական պրեֆեկտին նշանակել իսկապի կարգադրութիւնների համար հրդեհի հանգցնելու ժամանակ: Կրանից յետոյ քաղաքային վարչութիւնը վճռեց 50000 գուլդէնի կրեդիտ բանալ թատրոնը վերականգնելու համար: Այդ նպատակով բոլոր խմբագրութիւնները ստորագրութիւններ են բացել և նշանաւոր դուժմաներ նուիրողների թուում բաւական շատ գերմանացիներ կան:

ԱՄԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգների նախագահ Գարֆիլդի վրա ատրճանակ արձակող չարագործ Գիտո, առաջարկում է 15000 զօրք զրաւական տալ, որպէս զի նրան արձակեն բանդից: Այն հաստատամտութիւնը, որով նա առաջարկեց այդ դուժմը, առիթ տուեց ենթադրելու, որ նա համախոհներ ունի: Գատատանական քննիչը հրաժարվեցաւ առ ժամանակ հրատարակել Գիտոի ներկայացրած խնդրագրի բնագիրը, միայն նկատեց, թէ խնդրագրի ձևից երևում է, որ նրա գրողը մօտ ծանօթ է դատաստանական կանոնների հետ և գրանից յետոյ անկարելի է համարում, որ Գիտո իսկապարկած լինի: Գիտո հրաժարվեցաւ իր համար պաշտպան ընտրել, ասելով թէ ինքն էլ լաւ կարող է իրան պաշտպանել:

Նորբրումս բանդի մէջ նա սկսեց կուռել բանդային ծառաներից մէկի հետ, որ մտաւ նրա սենեակը, նկատելով նրա կասկածաւոր շարժումները: Կուռի ժամանակ պատահամբ արձակվեցաւ բանտային ծառայի ընկալիչը, բայց բաղաւորապէս ոչ ոք չը վերաւորվեցաւ: Միւս ծառաները հազիւ կարողացան բաժանել կուռեղներին: Թէ ինչ էր մտադիր անել Գիտո, այդ ոչ ոք չը տէ: Շատերը հաւատացնում են, որ նրա մօտ դանակ են գտել: Ամենից հաւանական է, որ կուռը պատահել է կաշնաւորվածի ջղերի գրգռման պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագրիները հաղորդում են, որ Կադուսոն մտքից անգլիական պարլամենտ մի առաջարկութիւն որ այսուհետեւ պառլամենտները ընդունվեն պարլամենտի մէջ առանց երդման: Եթէ այդ առաջարկութիւնն ընդունվի, Բրէշլո որ այդքան տանջվեց համոզմունքի ազատութեան համար, հասած կը լինի իր նպատակին և հարթած կը լինի ճանապարհը ապագայ սերունդներին:

—Իօնդոնում նորբրումս կայացած բժշկների կոնգրէսի մէջ կանայք-բժշկներ ընդունվեցան որպէս կոնգրէսի անդամներ, թէ և Անգլիայում կանայք տղամարդկանց հետ հաւասար իրաւունք ունեն բժշկական պրակտիկայով պարապելու: Կանայք-բժշկներ բողոք ներկայացրին կոնգրէսի կողմից իրանց դէմ գործ դրած անարդարութեան պատճառով:

—Ֆրանսիական կառավարութիւնը առաջին անգամ պատճանշան չնորհեց մի գերատանին: Այդ գերատանը պ. Գ. Ե. Մի և նոյն ժամանակ եօթ կանայք ստացան այս օրերս ակադեմիական միջաւեր ֆրանսիական ազգային լուսաւորու-

թեան միւնիստրութեանց: Այդ կանանցից մէկը, տիկին Օայլֆալդի ստացաւ այդ մեդալը կենտրոնական Աֆրիկայում արած ճանապարհորդութեան համար, երկրորդը, տիկին Մօտ-Լըանէ, մանուկների դաստիարակութեան և դպրոցական գործին նպաստելուն իր մատուցած ծառայութիւնների համար, վերջապէս տիկին Ֆուլդը Վիլարէ իր հնազանդական աշխատութիւնների համար:

—Պորտուգալիայում և Սպանիայում կատարված պարլամենտական ընտրութիւնները նպաստաւոր են կառավարչական կուսակցութեանը: Ընդդիմադրական կուսակցութեան պատկանող ներկայացուցիչները փոքր թուով են ընտրվել:

—Բերլինի «Berliner Nachrichten» լրագիրը գրել է մի յօդուած, որի մէջ մեղադրել է իշխան Բիսմարկին թէ նա է եղել հակահրէական շարժման զրդող: Գերմանիայում Գերմանական կառավարութիւնը զանգատ է ներկայացրել դատարանին լրագրի զրգարութիւնների դէմ: Գատաստանի ժամանակ խմբագրի պաշտպան աղօթաւոր պապուցել է որ Բիսմարկ մեծ համակութեամբ էր ընդունում հակահրէական ցոյցերը և հրէաների իրաւունքները սահմանափակել ձգտող իրան ներկայացրած ուղերձները: Գատարանը արդարացից լրագրի խմբագրին, ուրեմն կողմնակի կերպով հաստատեց Բիսմարկի մեղաւորութեան իրողութիւնը:

—Իրանդական կառուածական բիլլը ընդունվեցաւ թէ համայնքների և թէ լորդերի ժողովից: Համաձայնութիւնը երկու ժողովների մէջ կայացաւ թագուհու միջնամուտիւնով: Նոր օրէնքը ընդունելու և ազգի մէջ հնարաւոր խռովութիւններին առաջն առնելու համար, ժողովները իրանդական բիլլի վերաբերութեամբ զոհեցին մի կողմից դուքս Արգայլի առաջարկութեան մի մաս, իսկ միւս կողմից Պարսէլի ամբողջ առաջարկութիւնը:

—Գրինվիլի ազատամիտ կուսակցութիւնը ներկայացրեց Կադուսոնին, որ, ինչպէս յայտնի է Գրինվիլի պատգամաւոր է, մի համարական աղբիւս և մի շքեղ բազմաթիւ կազմի փայլեց չինած և զարդարված Կադուսոնի տոհմական նշանակով: Այդ ընծայով ընտրողները ուղում էին ցոյց առնել որ Կադուսոն միշտ կը պահպանի պարլամենտում Գրինվիլի պատգամաւորի նստարանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագրը հաղորդում է, պալատական միւնիստր կոմս Աղբրբերգ հիւանդութեան պատճառով օգոստոսի 18-ին արձակված է պաշտօնից: Նշանակված են պալատական միւնիստր կոմս Վօրոնցով-Կաշկով, պատերազմական միւնիստրի կոնցլերարիայի կառավարիչ գեներալ Եսկիմովիչ և նրա օգնական Լօբօ: Բեսարաբիայի նահանգապետի պաշտօնի վրա նշանակված է Կօնգար, իսկ Չերնիգովի ստատակի սօվետնիկ իշխան Շախովկոյ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՄՈՍԿՎԱ. Ա. Բ. Շատ ուրախ կը լինենք ստանալ ձեզանից և տպիլ «Վշակի» մէջ մի յօդուած Ռուսաստանի կառուածական խնդրի վրա:

—ԿԻՍԼՈՎՊՈԼԻ. Նախարանց: Տպեցիք ձեր նամակը և մի թուրը ստացանք Մանկունու համար կառուցվող արձանի համար: Բայց լուրը սխալ է, Մանկունու համար դեռ ևս ոչ մի տեղ արձան չեն կանգնեցնում: Ասում էք որ այդ գիւղաւանում Ռուբինեան վարդապետին մի թուրը ուղարկեց, որ թիւ և ասեղ առնի: Նա փող շատ ունի և թիւի ու ասեղի համար կը բաւականանայ: Աւելի լաւ չէ ու ուղարկեք ձեր 1 թուրը Վիլենայի «Journal d'Orient» լրագրին, գոնէ նպաստած չը լինէք, դուք էլ, հայոց օրգանի գոյութեանը:

—ԹԻՖԼԻՍ. Յակոբ փերլեան, Կարդացէք նախընթաց պատասխանը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

144 Արժույթը զարգացնելու
ամենալավ միջոցը
մեղքի և հայելիների:

ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԱՃԱՌԻ
ՌԵԼՈՒ համար ստացված է ՕՂԻ
ՇՏՐԻՏՏԵՐԻ, արտասահմանի զանազան
ԿՕՆՍԵՐՎԱՆԵՐ և ԽՄԻՋՔՆԵՐ
և ՎԱԿԱՍԱՆ «ժառ»։ Գները չափազանց
են։ Գործակալական պահանջները մեջ, Արժույթը
նույն թատրոնի տակ բաժանվում է 1—3

Ա. ՊՐԻԴՈՆՈՎԻ և Ի. ՇԱԽՆԱԶԱՐՈՎԻ
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ
Սերգեյևսկայա փողոցի պե-
տական բանկի բաժնի գրասենյակում
գնում է և ծախում է % թղթեր,
ՓՈՒԱՆՑՔՆԵՐ է անում Ս. Պետրով-
բուրգ, Մոսկով և Օդեսա, նոյնպես և Ֆրանսի-
սիա, Անգլիա և Ամերիկա:

ԱՊԱՀՈՎՈՒՄԷ ներքին 1 և 2
փոխառություններ հանգչելուց 50
կ.: Օտարաբաղադրյալներից գրասենյակը
խնդրում է ուղարկել **ԱՆՀՐԱԺԵՇՏ**
ԴՐԱՄԸ փոստային ծախսի և գրքերի
մարկաների համար իւրաքանչիւր ապահով-
վազրի համար 10 կոպեկ: 1—3

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անունով **ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՄՅ**
դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է
Կովկասեան ու Կենտրոնական գրադա-
ռանոցներում:

Գինն է 40 կոպեկ:
Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպե-
կով ձեռք բերել, գինը **ԿԱՆԻՍԿ** վճա-
րելով և ճանապարհահատը իր վրա
առնելով:
Թող գինն մեզ հետեւալ հասցեով.
«Յ Տիֆլիս.— Նա Ավաբարժ. Ի-
վանու Պետրովի Նազարյանց»:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆՔԱՆ
ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբա-
ներ, կոնֆետներ, **ԿԱԿԱՍ**, բրինձ, Ա-
ՄԱՆԵԼԷՆ, բոլորեղ, թաներ, երես լուա-
նալու ամաններ, չայնիկներ, բաժակներ,
կերակրի ամաններ (սյճե), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գգալներ,
ԳՐԻՉՆԵՐ, Թուղթ, մատիտներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, ալբոմ-
ներ, ՄԱՀԱԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍՑ, արկիւ, պա-
րուսին, Թաշկինաներ, երեսքիներ, կեծե-
կա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՑԷՆ, խե-
րես, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու-
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գանել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մա-
քնեղի, խմոր ԾԱՐԱԻՒ ԴԷՄ, ԽԻՆԱՑԻ ԳԷ-
նի ջերմի ԴԷՄ, կարբոնային ՓՈՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական Թուղթ վատերկրոգե-
տի համար, պարսկական փոշի: 54—100

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմեոնե-
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Ներսիսի
«Տնային բժշկական մարմնամարզութեան»
գրքի հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-
դառանոցներում» նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ. «Тройцкій пер. типо-
графия Вартанянца, въ Тифлисе»:

Արդէն ծախվում է
«ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ»
Անունով մեր **ՉՈՐՐՈՐԴ** տարուայ
դասագիրքը Կենտրոնական և Կովկասեան
գրադառանոցներում:

Գինն է 60 կոպեկ
Գումարով առնողներին գինը մեզ կը լինի:
Իսկ ով ցանկանում է հատը 55 կոպե-
կով ձեռք բերել, գինը **ԿԱՆԻՍԿ** վճա-
րելով և թող գինն մեզ հետեւալ հասցեով.
Յ Տիֆլիս.— Նա Ավաբարժ. Ի-
վանու Պետրովի Նազարյանց:

Յ. Նազարյանց
6—25

Въ Редакции газеты
«МШАКЪ»

Продается
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»
Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխեցաւ Գաւոն փակայա փո-
ղոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՈՅԻՑ փողոցը № 11. փօստատան
ետեւի քուէն: Ընդունվում են ամեն լե-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամատչելի գներով:
Նոյն տպարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
տպագրութեան համար փայտի և պղնձի
վրա:

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԻՔԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՑԻԻ

Տպագրւած մաքուր թղթի վրա, գիրքը բաղ-
կանում է 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է
«Մշակ» խմբագրատանը, «Կենտրոնական
գրադառանոցում», «Կովկասեան գրա-
դառանոցում» պ. Չաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բաղար-
ջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագաղին-
ներում:

Գինն է 1 րուբլ 20 կոպ:

1880 թուից թիֆլիսում բացվել են պանսիօն և կրկա-
կան դասատուներ, քաղաքային և զինուորական գիմնազիանե-
րի և բէալական ուսումնարանի աշակերտների համար, և ուսու-
մնարան երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների
համար: Գաղեական, Գերմանական լեզուների և երաժշտու-
թեան վարժութիւնը աւանդվում է գործնականապէս:

Երեխաներին ընդունում են ամբողջ տարի, ամենայն օր
8-ից մինչև 2 ժամ:

Միջայեղեան կամուրջ, Կիկուպեվսկի փողոցի անկիւնում,
իշխանուհի Գրուզինսկու տանը № 21, որտեղ բովանդակվում
է երրորդ բաժնի Հաշտարար դատարանը:

2—3 **Բ. ԲԵՑՕԼԻ:**

Մ Ա Ն Կ Ա Ն Պ Ա Ր Տ Է Չ

Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

Ընդունվում թիւները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի
1-ից: Մանկական պարտէզի՝ մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ
«Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:
Իշխան Ն. Ամատունու տուն, Վելիամինովսկի փողոցի վերայ:

Բ. Միրիմանյան

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանգինեանի հետեւեալ
աշխատութիւնը. «ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ
ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ» ծխական դպրոցների 4-րդ տարվայ դասընթացը,
և միանգամայն 1-ին, 2-րդ և 3 տարիների համար հրահանգ:

ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐԷԼ (աթուղներ և բազմաթուղներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատուրիկաց փողոցի անկիւնում Մի-
քայէԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրյալ կարող են գինը այս հասցեով. Կիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.

60—150

ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ

Переѣхалъ на Сололакскую ули-
цу, въ домъ К. Меликова.

ВЪ РЕДАКЦИИ ГАЗЕТЫ «МШАКЪ»
продаются слѣдующія нѣмецкія брошюры:

Die Oekonomische Lage der Armenier
in der Türkei. von Dr. GRIGOR ARZRU-
NI. Uebersetzt von A. Amiranjan. Preis
25 kop.

Die Hungersnoth in Türkisch-Armenien
von Dr. GRIGOR ARZRUNI. Uebersetzt von
A. Amiranjan. Preis 20 kop.

**ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱԶՈՂՆԵՐԸ** պէտք է գնեն **ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ
լու տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր.
և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ
և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖ-
ԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆ-
ՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական
խանութը կը առնէ **ՄԱՔՈՒՐ** թէյ
առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**:

39—100

**ՀԱՆԱԲԱՐՈՒ Ս. ՄԱՐԻԱ-
ՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԿՊՐՈՑԻ**
վարչութիւնը պատիւ ունի յայտնել
յարգող հասարակութեանը, որ օ-
գոստոսի 20-ից դպրոցը **ԸՆԴՈՒ-
ՆՈՒՄ** է **ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ-
ՆԵՐ** ամեն օր, առաւօտեան ժամի
8—12-ը: Հասցէն՝ Լազարևսկի փո-
ղոց, տուն պ. Միլիք-Շահնազարեանցի:

3—5

ՎԵՐԱԳՈՒՆԵՐ 4 ր., ճրճողներ 1 ր.,
ճալիղ աթուղներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱՓՈՒ
4 ր., ԲԱԶԱՓՈՒ-ՄԱՀԱԿԱՆ 10 րուբլ և
աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի
աման քորոցներ 50 կ., պաստեղա ծխողների
համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:**

10,000 զոյգ գուլթաներ 25 կ.—ից զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱԿԱՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բոմպէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-
րուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէլովեր
4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000
ֆունտ թէյ թէ՛ ՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: եր-
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ** մէջ:

36—100